



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

0009 ք.Երևան, Կորյուն 17, հեռ. 583734

«3» հունիսի 2024թ.

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Դատավորի լիազորությունները դադարելու վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 166-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Դատավորները պաշտոնավարում են մինչև վաթսուներեք, իսկ Սահմանադրական դատարանի դատավորները՝ մինչև յոթանասուներեք տարին լրանալը»:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ դատավորի լիազորությունները դադարում են, եթե լրացել է նրա 65 տարին:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով դատավորի պաշտոնավարումը դադարում է նրա 65 տարին լրանալու օրվանից»:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով դատավորի լիազորությունների դադարման դեպքում Բարձրագույն դատական խորհրդի նախագահը դատավորի պաշտոնավարման ժամկետի ավարտից ոչ շուտ, քան մեկ ամիս առաջ և ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ հայտարարություն է տարածում դատական իշխանության պաշտոնական կայքում»:

Ելնելով վերոգրյալից՝ հայտարարվում է, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի Արթուր Մկրտչյանի 65 տարին՝ լիազորությունների ժամկետը, լրանում է 2024 թվականի հունիսի 21-ին:

Կ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ